Հավելված N 1
ՀՀ կառավարության 2023 թվականի
մայիսի 11-ի N 731 - Ն որոշման

# Կ Ա Ր Գ

## ՀԱՏՈՒԿ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՄԱՐՏԱԿԱՆ ԶԵՆՔԻ ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ

1. Հատուկ կանոնադրական խնդիրներ իրականացնող իրավաբանական անձանց (այսուհետ՝ իրավաբանական անձ) մարտական զենքի առանձին տեսակներ տրամադրվում են Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության (այսուհետ՝ ոստիկանություն) կողմից՝ «Զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքով (այսուհետ՝ օրենք) իրենց վրա դրված պարտականությունների կատարման նպատակով:

2. Իրավաբանական անձանց մարտական զենք տրամադրվում է ոստիկանությանն ուղղված դիմումի հիման վրա, որտեղ նշվում է իրավաբանական անձի անվանումը, գտնվելու և գործունեություն իրականացնելու վայրը, պետական գրանցման համարը, գործունեության տեսակը, ինչպես նաև պահանջվող մարտական զենքի քանակը: Սույն կետում նշված դիմումը քննարկվում է 10-օրյա ժամկետում:

3. Մարտական զենք տրամադրելու համար իրավաբանական անձը դիմումին կից պետք է ներկայացնի զենք պահելու և օգտագործելու թույլտվություն, կանոնադրության պատճեն:

4. Մարտական զենքը ոստիկանությունից ստանում է իրավաբանական անձի զենք պահելու զետեղարանի պատասխանատու անձը, որի վերաբերյալ կազմվում և ստորագրվում է հանձնման-ընդունման ակտ:

5. Իրավաբանական անձանց աշխատողներին մարտական զենք տրամադրվում է իրավաբանական անձի ղեկավարի գրավոր հրամանով, որի

վավերացված պատճենը, ինչպես նաև զենք կրելու թույլտվության պատճենը ներկայացվում են ոստիկանություն:

6. Մարտական զենքի գործադրման յուրաքանչյուր դեպքի մասին, որի հետևանքով մարդու կյանքին, առողջությանը կամ սեփականությանը վնաս է պատճառվել, ինչպես նաև զենքը կորցնելու մասին ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում իրավաբանական անձի ղեկավարը գրավոր տեղեկացնում է ոստիկանությանը:

7. Մարտական զենքի հետ կապված թերություններ հայտնաբերելու դեպքում իրավաբանական անձը 3-օրյա ժամկետում մարտական զենքը վերադարձնում է ոստիկանություն՝ հայտնաբերված թերությունները վերացնելու կամ մարտական զենքը փոխարինելու նպատակով:

8. Օրենքի 13-րդ հոդվածով նախատեսված հիմքերի առկայության դեպքում տրամադրված մարտական զենքը 3-օրյա ժամկետում հանձնվում է ոստիկանություն, որի վերաբերյալ կազմվում և ստորագրվում է հանձնման-ընդունման ակտ:

9. Իրավաբանական անձի կողմից օրենքով իր վրա դրված պարտականությունների կատարման անհրաժեշտության վերացման դեպքում տրամադրված մարտական զենքը զետեղարանի պատասխանատուի միջոցով 3-օրյա ժամկետում փոխանցվում է ոստիկանություն: Ոստիկանությունն ապահովում է վերադարձվող մարտական զենքի ընդունումը, որի վերաբերյալ կազմվում է հանձնման-ընդունման ակտ: Հանձնման-ընդունման ակտն ստորագրվում է իրավաբանական անձի և ոստիկանության կողմից:

10. Սույն որոշմամբ նախատեսված ժամկետում մարտական զենքը ոստիկանություն չհանձնվելու դեպքում ոստիկանությունն այն վերցնում է անհապաղ՝ կազմելով համապատասխան արձանագրություն (համաձայն N 3 հավելվածի), որի մեկ օրինակը տրամադրվում է իրավաբանական անձին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

12.05.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ